# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**1.Անուն Ազգանուն**

Լևոն Ալթունյան

**2. Զբաղեցրած պաշտոնը**

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի պաշտոնակատար

**3. Գործուղման վայրը և ժամկետները**

Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև մայիսի 22-ից 23-ը, 2017 թ.

**4. Հրավիրող կողմը**

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

**5. Գործուղման նպատակը**

Մասնակցություն Առողջապահության համաշխարհային ասամբլեայի 70-րդ նիստին

**6. Քննարկված թեմաները**

Համաժողովը քննարկել է աշխարհի բոլոր երկրներին հուզող առողջապահական խնդիրների լայն շրջանակ:

Համաժողովին քննարկվել և ընդունվել է մի քանի տասնյակ փաստաթուղթ: Դրանք կարգավորիչ դեր են ունենալու համաշխարհային առողջապահության զարգացման հեռանկարում: Փաստաթղթերն առնչվում են ԱՀԿ բարեփոխումներին, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարին, առողջ կենսակերպին, հանրային առողջության հարցերին, համաճարակային հսկողությանը և հիվանդությունների կանխարգելմանը, ֆինանսական, կադրային, կառավարման, իրավական խնդիրներին, առողջապահության համակարգի գործունեությանը և այլ

խնդիրներին: Քննարկվել է նաև 2018-2019թթ. համար առաջարկվող ԱՀԿ բյուջետային ծրագիրը:

**7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Համաժողովին մասնակցում էին բազմաթիվ երկրների առողջապահության նախարարներ, բարձրաստիճան պաշտոնյաներ ու փորձագետներ:

Համաժողովի հիմնական աշխատանքին զուգահեռ հանդիպումներ են կայացել Շվեյցարիայի Համադաշնություն, Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության առողջապահության նախարարների հետ: Քննարկվել են երկկողմ հանագործակցության կոնկրետ ուղղությունները և քայլերը, որոնք գործնական հիմքերի վրա կդրվեն փոխայցերի կազմակերպման միջոցով: Հանդիպում է եղել ՄԱԿ-ում Միացյալ Թագավորության մշտական ներկայացուցչի, դեսպանի և Միացյալ Թագավորության՝ ԱՀԿ գլխավոր տնօրենի պաշտոնում առաջադրված թեկնածուի հետ:

Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարար Վերոնիկա Սկվորցովայի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են առողջապահության ոլորտում երկու երկրների համագործակցության զարգացման, այդ թվում 2017թ. աշնանը հայ-ռուսական առողջապահական բիզնես ֆորում կազմակերպելու հետ կապված հարցեր:

Հանդիպում է կայացել Պատվաստումների և պատվաստանյութերի գլոբալ դաշինքի (ԳԱՎԻ) ղեկավարության հետ: ԳԱՎԻ-ի ղեկավարների կողմից բարձր է գնահատվել Հայաստանում իմունականխարգելման ազգային ծրագրի իրականացումը, նոր պատվաստումների ներդրման գործընթացը, ինչի արդյունքում լուրջ ձեռքբերումներ են գրանցվել վարակիչ հիվանդությունների կանխարգելման և մանկական մահացության կրճատման ուղղությամբ: Հանդիպման ընթացքում քննարկվել են առաջիկա համագործակցության զարգացման հնարավորությունները:

**8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Համաժողովի շրջանակներում նշվել է տարածաշրջանային երկրների ջանքերը միավորելու կարևորությունը, որին իր աջակցող մասնակցությունը կունենա ԱՀԿ համաշխարհային գրասենյակը:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության բարձրագույն վեհաժողովի ընթացքում ընտրվել են Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենը, Առողջապահության համաշխարհային ասամբլեայի հինգ փոխնախագահներ, հիմնական հանձնաժողովների նախագահներ, ստեղծվել է գլխավոր հանձնաժողով:

**9. Առաջարկությունները**

Երկրներին առաջարկվել է հետևողական լինել ԱՀԿ հանձնարարությունների և ստորագրված փաստաթղթերի իրագործման հարցում, ինչը կնպաստի Կայուն զարգացման ծրագրով նախատեսված առողջապահական նպատակների իրագործմանը:

**10. Գործուղվողները**

ՀՀ առողջապահության նախարարի պաշտոնակատար՝ Լևոն Ալթունյան,

ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ՝ Սամվել Մարգարյան

**11. Ստորագրությունը, ամսաթիվը**

26 մայիսի 2017 թ.